ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2023 թվական թիվ 112-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ», «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ», «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց», «Ախուրյանի համայնքային գրադարան» և «Ախուրյանի Ֆերմատա արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետ՝ Կազմակերպություններ) լուծարել՝ օրենքով սահմանված կարգով:
2. Նշանակել լուծարման հանձնաժողով (լուծարող)՝ համաձայն թիվ 1-3 հավելվածների:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված կարգով լուծարման գործընթացն իրականացնելու ուղղությամբ:

4. Սահմանել, որ

1) Կազմակերպությունները համարվում են լուծարված, իսկ դրանց գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից,

2) Կազմակերպությունների լուծարմամբ դրանց գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու,

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լուծարման հանձնաժողովին են անցնում Կազմակերպությունների գործերի կառավարման լիազորությունները:
5. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո Կազմակերպությունների մնացած գույքը հանձնել համայնքին:

6. Սահմանել լուծարման կարգն ու ժամկետները՝ համաձայն թիվ 4 հավելվածի:
7. Սույն որոշման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում Կազմակերպությունների լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունը գրառելու նպատակով:

8. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
9. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեղմ ժամկետում մշակել «Ախուրյանի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերը և դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու հաստատմանը:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -17	Դեմ -2	Ձեռնպահ -4
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ	Ա. ԴՐՄԵՅԱՆ	Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ	Ա. ՄՔՈՅԱՆ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ		Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ		
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		
Ա. ՉԱԼՈՅԱՆ		
Է. ԽԱՉԱՏՐՅԱՆ		
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ		
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ		
Մ. ՄՆԱՑՅԱՆ		
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ		
Հ. ՆԱՎՈՅԱՆ		
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ		
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ		
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

29 օգոստոսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2023 թվականի օգոստոսի 29 -ի թիվ 112 – Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Կարեն Ներսիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ.
2. Մարտիկ Մաթոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ.
3. Հասմիկ Նավոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի օգնական, հանձնաժողովի անդամ.
4. Արա Ղանդիլյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - իրավաբան, հանձնաժողովի անդամ.
5. Գաբրիել Միքայելյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ.

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112 – Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Սուրեն Աբրահամյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ.

2. Միեր Մնացյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ.

3. Մամեդ Սալոյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի գործառույթներով պայմանագրային աշխատող, հանձնաժողովի անդամ.

4.Գրետա Նիկոլյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ.

5.Հրաչյա Սահրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ.

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2023 թվականի օգոստոսի 29 -ի թիվ 112 – Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Կարեն Սերգոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ.
2. Շամիրամ Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ.
3. Մարինե Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ.
4. Գեղամ Մաթևոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնաժողովի անդամ.
5. Զոհրաբ Պապիկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ.

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112– Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ», «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ», «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց», «Ախուրյանի համայնքային գրադարան» և «Ախուրյանի Ֆերմատա արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) լուծարման հանձնաժողովները http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություններ են զետեղում դրանց լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից:

Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքն ստանալու ուղղությամբ, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է իրավաբանական անձի լուծարման մասին:

2. Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող կազմակերպության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին:

3. Եթե լուծարվող կազմակերպության ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը հրապարակային սակարկություններով վաճառում է կազմակերպության գույքը՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով:

4. Լուծարման հանձնաժողովը լուծարվող կազմակերպության պարտատերերին գումարներ է վճարում հետևյալ հերթականությամբ՝ լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման օրվանից:

առաջին հերթին բավարարվում են լուծարվող կազմակերպության գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները. երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ

առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

չորրորդ հերթին մարվում է բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը.

հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

5. Լուծարման հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև կազմակերպության լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի:

6. Լուծարման հանձնաժողովի կողմից պահանջներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո պարտատիրոջ ներկայացրած պահանջները բավարարվում են լուծարված կազմակերպության գույքից, որը մնացել է պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո:

7. Լուծարման հանձնաժողովի կողմից մերժված պարտատերերի պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են մարված:

8. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին:

Հաստատված լուծարման հաշվեկշիռը լուծարման հանձնաժողովը ներկայացնում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին:

9.Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո իրավաբանական անձի մնացած գույքը հանձնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքին:

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց», «Ախուրյանի համայնքային գրադարան» և «Ախուրյանի Ֆերմատա արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարվում են լուծարված, իսկ դրանց գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից:

11. Կազմակերպությունների լուծարման ժամկետը՝

սկիզբը՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ը,

ավարտը՝ 2023 թվականի նոյեմբերի 15-ը: